

**ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

16.04.2019



ՀՀ ոստիկանության հարգարժան պետ

**Ոստիկանության կոլեգիայի հարգելի՛ անդամներ
Շա՛տ սիրելի ոստիկաններ եւ վետերաններ**

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի եւ բոլոր սյունեցիների
անունից շնորհավորում եմ ձեզ՝ մասնագիտական տոնի՝

Ոստիկանության օրվա առթիվ:

Մաղթում եմ ձեզ հաջողություններ եւ նորանոր ձեռքբերումներ ձեր
դժվարին եւ պատասխանատու աշխատանքում:

Այսօր, առավել քան երբեւէ, կարելու է ձեր առաքելությունը, որը միշտ
կատարել էք անձնվիրաբար՝ հաճախ կյանքի եւ առողջության գնով:

Համոզված եմ, որ առաջնորդվելով սկզբունքայնությամբ եւ

մասնագիտական պատվախնդրությամբ՝ այսօր էլ

մեծ պատասխանատվությամբ կկարողանաք լուծել ձեր առջեւ դրված
բարդ ու դժվարին խնդիրները, կդիմակայեք արդի մարտահրավերներին:

Շնորհավորում եմ նաեւ բոլոր նրանց, ովքեր երբեւէ կրել են

ոստիկանական համազգեստ եւ ուսադիրներ ու միշտ բարձր են

պահել ոստիկանության պատիվն ու հեղինակությունը:

Առանձնահատուկ շնորհավորում եմ ոստիկանության շատ սիրելի

վետերաններին: Խոնարհվում եմ հայրենիքի սահմանները

պաշտպանելիս եւ իրենց ծառայողական պարտքը կատարելիս զոհված

մեր հերոս ոստիկանների հիշատակի առաջ. հավերժ փա՛ռք ու պատի՛վ

նրանց:

Կրկին շնորհավորելով մասնագիտական տոնի
կապակցությամբ՝ ցանկանում եմ ձեզ եւ ձեր ընտանիքներին
առողջություն, անսահման երջանկություն եւ ամենայն բարիք:
Աստված պահապան բոլորիս: